Կամո Առաքելի Արեյան

Ծնվել է 1957թ. նոյեմբերի 20-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղում:

1979թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

1979-80թթ. աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես տնտեսագետ:

1980-82 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1982-95թթ. աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես գիտական աշխատող:

1995-99թթ. եղել է Ազգային ժողովի պատգամավոր: Մինչև 1997թ. մշտական հիմունքներով աշխատել է ՀՀ Աժ պաշտպանության, ազգային անվտանգության և ՆԳ հարցերի մշտական հանձնաժողովում:

1997-2001թթ. եղել է Երևանի քաղաքապետի տեղակալ, 02.1998-05.1998թթ.՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար:

2001-2002թթ. եղել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ:

2002-2003թթ. եղել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ:

2003 - 2009թթ. եղել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

2009թ. հուլիսի 6-ին Երևան քաղաքի ավագանու որոշմամբ նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու երեխա: